ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1.1

«ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ1» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 19-ը փետրվարի 2026թ.
ժամը 15^{30}

Մասնակցում էին՝
նախագահ՝
- ՀՀ ԱԱԾ ՏնտՎ պետ՝ Վ. Ֆարսյանը,
անդամներ.
- ՀՀ ԱԱԾ ՏնտՎ աշխատակից՝ Կ. Աբրահամյանը,
- ՀՀ ԱԱԾ ՏնտՎ աշխատակից՝ Ա. Գալստյանը:
Քարտուղար
- «Փրոմոուշն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ, Վ. Էլոյանը:

«ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Վ. Ֆարսյան)

1. «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ1» ծածկագրով ընթացակարգի պարզաբանման՝ հարցադրման մասին.
2. «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ1» ծածկագրով ընթացակարգի փոփոխված հայտարարության և հրավերի տեքստերը հաստատելու մասին.
3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ1» ծածկագրով ընթացակարգի պարզաբանման՝ հարցադրման մասին.

(Վ. Ֆարսյան)

1.1. 18.02.2026թ-ին ժամը 14:39:54-ին Մասնակցի կողմից ստացվել է հարցում (կցվում է) հետևյալ բովանդակությամբ՝

«Հարգելի Պատվիրատու թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ1 ծածկագրով հրապարակված մրցույթի հրավերով սահմանված Հավելված 1 Տեխնիկական բնութագիր սյունակում զրահաբաճկոնի բալիստիկ ներդիրի վերաբերյալ նշում չկա:Խնդրում ենք պարզաբանել, արդյոք զրահաբաճկոնը իր մեջ պետք է ներառի բալիստիկ ներդիրը թե ոչ: Ներառելու դեպքում խնդրում ենք տրամադրել բալիստիկ ներդիրին վերաբերվող տեխնիկական բնութագիրը՝ քաշը, չափսը, աշխատանքային ջերմաստիճանի տիրույթը , կորությունը ծածկույթը, գույնը, բալիստիկ նյութը և այլն: Առանձին ֆայլով ներկայացված Ներկայացվող պահանջներ Ծանոթություն՝ 1.-ում նշվում է << կոշկեղենի 3 տարբեր չափսեր >> , սակայն գնվելիք ապրանքը Զրահաբաճկոն է և կոշկեղենի մասին հրավերով սահմանված Տեխնիկական բնութագիր սյունակում ոչին նշված չէ, խնդրում ենք տալ պարզաբանում:»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.2. Հանձնաժողովը որոշեց պատասխանել հարցում ներկայացրած Մասնակցին (կցվում է) հետևյալ բովանդակությամբ՝

«Հարգելի մասնակից՝

1. Զրահաբաճկոնը լրակազմում բալիստիկ ներդիր չի պարունակում:
2. Ծանոթություն 1-ում նշված «կոշկեղենի 3 տարբեր չափսեր» գրվածքում կոշկեղեն բառը վրիպակ է, պետք է փոխարինել մարտաբաճկոն բառով, որի մասով հրավերում կատարվում է համապատասխան փոփոխություն:»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ1» ծածկագրով ընթացակարգի փոփոխված հայտարարության և հրավերի տեքստերը հաստատելու մասին

(Վ. Ֆարսյան)

Հաստատել էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված Ընթացակարգի փոփոխված հայտարարության, ինչպես նաև հրավերի տեքստերի նախագծերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին.

(Վ. Ֆարսյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ հայտերի բացման նիստը անցկացնել ՀՀ ԱԱԾ տնտեսական վարչությունում՝ ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեում, հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվում 09.03.2026թ. ժամը 11:00-ն, իսկ էլեկտրոնային աճուրդը սկսվում է 10.03.2026թ. 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ. Ֆարսյան

Անդամներ՝ _____ Կ. Աբրահամյան

_____ Ա. Գալստյան

Քարտուղար՝ _____ **Վ. Էլոյան**